ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գրական ունկնդրումն առաջին դասարանում

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզաննա Ղազարյան

Արագածոտն մարզ, գյուղ Սասունիկ

Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց

2022թ.

Բովանդակություն

Ներածություն…… 3

Հետազոտության նպատակն ու խնդիրները……4

Արդիականություն……5

Գրական ունկնդրումն առաջին դասարանում……..…. 6-14

Եզրակացություն……15

Օգտագործված գրականության ցանկ……..16

Ներածություն

Տարրական դասարաններում մայրենի դասընթացի կարևորագույն բաղադրիչ են կազմում գրական ունկնդրման դասաժամերը: Այս աշխատանքն սկսվում է ուսումնական գործունեության առաջին իսկ շաբաթից:

Գրական ունկնդրման ժամերին ուսուցիչը օգնում է վեցամյա փոքրիկին՝ ձևավորելու նոր արժեհամակարգ, ինչը հենվում է սիրո, բարության, ընկերասիրության, միմյանց հանդեպ դրսևորվող հոգատարության վրա: Սովորողի մոտ ձևավորվում է խոսքի մշակույթ, հարստանում է բառապաշարը, մշակվում է կարդալու տեխնիկան, զարգանում են երևակայությունը, տրամաբանական մտածողությունը և կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Գրքի և ընթերցանության նկատմամբ սովորողների մշտական հետաքրքրության կայացմանը նպաստում է նաև գրական ունկնդրման ժամերի ճիշտ և նպատակային կազմակերպումը: Գրական ունկնդրումն ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ:

Գրական ունկնդրման ժամանակ ուսուցիչը կարդում է գրական ստեղծագործություններ կամ առաջարկում է դիտել մուլտֆիլմեր, իսկ աշակերտը, հասկանալով ընթերցված նյութը, կամ դիտած մուլտֆիլմը ակտիվացնում է մտածական գործընթացները, ինչը կարևոր նախապայման է դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Գրական ունկնդրման պահանջներն առաջին դասարանում հետևյալն են.

●կարողանալ ունկնդրել և դիտել,

●հարցերի օգնությամբ վերարտադրել ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները,

●կարողանալ պատմել ըստ ունկնդրածի, տեսածի, հիշողության, նկարի և այլնի:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Գրական ունկնդրումն առաջին դասարանում կազմելու հիմնական **նպատակներն են**.

Սովորողը պետք է կարողանա՝

●ունկնդրել հաղորդվող բնագիրը,

●կազմել բառեր,

●հասկանալ լսածի բովանդակությունը,

●բնութագրել և նկարագրել հերոսին,

●կատարել հերոսների համեմատություն,

●վերարտադրել նյութի բովանդակությունը,

●արտահայտել կարծիք,

●վեր հանել ստեղծագործության հիմնական գաղափարը,

●ձևավորել արժեհամակարգ:

Դասի խնդիրները՝

●զարգացնել սավորողների բանավոր խոսքը,

●լսելու, մտածելու կարողությունը,

●հարստացնել բառապաշարը,

●ձևավորել հարգանք մեծերի նկատմամբ,

●հոգ տանեն մեծերի մասին

Արդիականություն

Ժամանակները փոխվում են, կյանքն էլ՝ ժամանակի հետ: Այսօր վեց տարեկան երեխան տիրապետում է եթե համակարգչային ոչ ամբողջական, ապա տարրական գիտելիքների: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը, և անհնար է այլևս մեր առօրյան պատկերացնել առանց դրանց: Սա կյանքի առաջընթացն է: Ժամանակն առաջ է շարժվում, իսկ այսօրվա ուսուցիչն իրավունք չունի ժամանակից անգամ մեկ քայլ հետ մնալու: Թե՛ տանը, թե՛ դպրոցում փոխվում է ամեն բան: Փոփոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության խնդիրները: Այժմ ժամանակակից երեխաների մտածողությունը, ցանկություններն ու հետաքրքրություններն այլ են և չեն համապատասխանում անցյալ ժամանակով ապրող մանկավարժին: Հետևաբար, նրա կողմից գործադրվող ուսուցման մեթոդներն արգասաբեր չեն լինի: Այսօր մենք խնդիր ունենք, որ ուսուցիչը գիտակցաբար քայլի արդիականության հետ, առաջնորդվի ժամանակի պահանջներով: Երեխաներին պետք է ուսուցանել և դաստիարակել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ բռնությունն առաջ է բերում հիասթափություն, անտարբերություն և ատելություն: Հարկավոր է դպրոցը դարձնել մանուկների աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական բարձր արժանիքներ: Նա պետք է տիրապետի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդներին, զբաղվի ինքնակրթությամբ:

Երեխայի ուսուցումը պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով, սովորեցնել այնպես, ինչպես նա է ընկալում աշխարհը՝ գունագեղ, հստակ ու մատչելի:

Դասարանը պետք է <<զինված>> լինի ժամանակակից ու գունագեղ պաստառներով, որոնց օգնությամբ սովորողն անմիջապես կընկալի նյութը, անհրաժեշտ է հաճախ կազմակերպել մուլտֆիլմերի կամ ֆիլմերի դիտում (դասանյութին համապատասխան)…

Գրական ունկնդրումն առաջին դասարանում

Տեխնիկապես հագեցած մեր դարում հեռուստացույցը, համակարգիչը և այլ ժամանակակից սարքեր փոխարինում են գրեթե ամեն ինչին: Այնուամենայնիվ, անկախ ժամանակից և պայմաններից, գրագետ և խելացի անհատի ձևավորման գործում գրքերը մնում են առաջին տեղում: Գրականությունն ունի ճանաչողական, հոգևոր-բարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն՝ գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, նրա համար ինքնակատարելագործվելու, դժվարությունները հաղթահարելու համար ուղիներ բացում: Ճշմարտության, բարու, խղճի, գեղեցիկի, արդարության, ազատատենչության գաղափարներն արտացոլված են գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններում: Հայ և համաշխարհային դասականների ստեղծագործությունների հերոսները հոգևոր բարձրագույն արժեքներ կրողներ են: Առանձնապես մեծ է դրական կերպարների ներգործությունը, որոնք սերունդներ են դաստիարակում իրենց խիզախության, անձնազոհության օրինակներով:

Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ է երեք բաղադրիչ՝

● բառապաշարի հարստացում ու կատարելագործում,

●խոսքի արտահայտչականություն՝ առոգանության պահպանում,

●լավ պատմելու կարողություն:

Վերոնշյալ երեք բաղադրիչները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված: Դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա:

Որպես մշակույթ՝ լսելը կամ ունկնդրելը մենք համարում ենք ենթագիտակցական գործընթաց՝ ինչպես մարսողությունը կամ աչք թարթելը, որի մասին ասելու շատ բան չկա: Երբ լսելու հասկացությունն ուսումնասիրվում է մանրամասնորեն, այն ցանկացած պարագայում դրվում է մասնագիտական հաղորդակցության համատեքստում. մի բան, որը

հղկվում է ուսուցչի կողմից։ Ինձնից շատ երկար ժամանակ է պահանջվել հասկանալու համար, որ լավ լսելը կախարդական հնարքի նման է։

Առաջին դասարանում գրական ունկնդրման նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը, ինչպես նաև մուլտֆիլմերի և փոքրիկ ֆիլմերի դիտումը: Դրանք պետք է լինեն ոչ երկար, հետաքրքիր, բովանդակալից։ Երեխայի ուսուցումը պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա է ընկալում աշխարհը՝ գունագեղ, հստակ ու մատչելի: Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթերցումն ու այն դարձնում ցանկալի:

Ուսուցչի խնդիրն է՝ հենց նախայբբենական շրջանից աշակերտի մեջ հետաքրքրություն սերմանել գրքի և ընթերցանության հանդեպ: Վաղ տարիքից մայրիկները երեխաներին քնեցնելիս կամ նրանց հետ խաղալիս պատմում ու կարդում են հեքիաթներ, ցուցադրում այդ գրքերի գունագեղ նկարազարդումները: Առաջին դասարանցին սիրում է ունկնդրել գեղարվեստական ստեղծագործություններ և դրանք նկարազարդել յուրովի:

Գրական ունկնդրման ժամերին հարկավոր է առաջին հերթին ուշադրություն դարձնել լեզվի ճիշտ ու գրագետ գործածությանը: Ունկնդրման միջոցով փոքրիկը կբացահայտի գեղարվեստական խոսքի հմայքն ու կախարդական ուժը:

Հեքիաթները, բանաստեղծությունները, փոքրիկ պատումները հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում մայրենիի ժամերը: Երեխաները հաճույքով են ընդգրկվում բեմականացումների նախապատրաստման գործընթացի մեջ, արտասանում են, երգում և նկարում:

Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում է բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող

ազդեցությունը: Հեքիաթը կարևոր տեղ ունի ոչ միայն առաջին դասարանի, այլև առհասարակ տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում, քանի որ հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, այն միևնույն ժամանակ կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է: Այս առումով հեքիաթի ունկնդրումը նպատակաուղղված նշանակություն է ստանում: Գրական ունկնդրման միջոցով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պետք է մեկնաբանվի, իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով: Գրական ունկնդրման դասերը պետք է վարել այնպես, որ երեխաները չհայտնվեն պասիվ ունկնդրի դերում: Ունկնդրման համար ընտրվող գեղարվեստական գրականությունը պետք է լինի՝

- մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, պատմողական, դինամիկ զարգացող սյուժեով,
- բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին,
- երեխաների կյանքը արտացոլող, որպեսզի հիշեցնի սեփական անձի հետ կապված իրավիճակներ,
- հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների ստեղծագործությունների ընտրանի (արձակ և չափածո),
- ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ,
- հումորային, զվարճալի պատմություններ:

Ունկնդրման միջոցով աշակերտներն ընկալում են գրական տեքստը: Ունկնդրումը նպաստում է խոսքի, երևակայության և մտածողության զարգացմանը: Գրական ստեղծագործության միջոցով փոխանցվող դեպքերը հուզազգայական վերաբերմունք են առաջացնում:

Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու հանդիսավոր երևույթները, առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք իրական կյանք: Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ

հարցում նրան օգնում է ուսուցիչը: Նա պետք է ուղղորդի երեխային մտքի ու հոգու ճանապարհով: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ ու իմաստուն լինել, աղքատն էլ, որը լիաչք, բարեսիրտ ու աննախանձ է: Նա անտրտունջ կրում է իր տառապանքները: Անվրեժ է չարիքի դեմ: Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը, որ ո՛չ աղքատությունը, ո՛չ որբությունը, ո՛չ ձախորդությունը արատներ չեն: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով, առանց վերամբարձ խրատաբանության: Այդ կերպ են վեր հանում հեքիաթի բարոյախոսությունը:

Չարին հաղթելու համար մարդն օգնության է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին: Վերմարդկային ուժերը հրաշագործ են: Երեխան պետք է ճանաչի բնության երևույթները, ընկալի հրաշք բնության կերպարանափոխության զորությունը: Իրապատում հեքիաթն անդրադարձ է մարդու կողմից մարդկային հարաբերություններին, մարդկային հասարակության ճանաչողությանը, դիտարկման, հոգեբանական վերլուծության և կենսափորձի կերպավորման միջոցով: Իրապատում հեքիաթի մեջ գերակշռում է մարդու մեջ առկա հրաշագործ ուժերի հնարանքը: Նման հեքիաթների մեջ պետք է ցույց տալ, որ հրաշքը ոչ թե բնության տարերային ուժերի մեջ է թաքնված, այլ մարդու ներքին ուժերի և հնարավորությունների: Այսպիսով՝ հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում շատ կարևոր է այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստի նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային ու երկրային գանձերը: Երեխան հավատում է հրաշքին: Հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում սովորաբար ուղեկցվում է չորս փուլով.

1. հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,
3. հեքիաթի բարոյախոսական իմաստի վեր հանում,
4. հեքիաթի լեզվի վերլուծություն:

Հեքիաթի ուսումնասիրությունը իրականացվում է, ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ: Բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով հեքիաթը

ուսումնասիրելուց հետո պիտի անցնել նրա բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը:

Սակայն նշենք, որ այդ ամենը չպետք է բացահայտ կերպով անել, այլապես հեքիաթը կդադարի նպաստել երեխաների երևակայության բացահայտմանը: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ լսած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում, որոնք անիրական են, մտացածին և այլն: Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների շրջանում պիտի կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր գաղափարը:

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի ու աշակերտների կազմած նկարներով պլանը: Սա պատմելու ուսուցման շրջանի առաջին փուլն է: Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլն: Պիտի հանձնարարել, որ երեխաները անգիր սովորեն այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանեն դրանք: Գրական ունկնդրման ժամերին կարող է դիտարկվել հարցերի հետևյալ շրջանակը.

- ✔ Ի՞նչ տեսար:
- ✔ Ի՞նչ զգացիր:
- ✔ Ինչո՞ւ է ստեղծագործության հերոսն այդպես վարվում:
- ✔ Ինչպե՞ս կվարվեիր դու այդ դեպքում:
- ✔ Ինչպե՞ս կվերնագրեիր ստեղծագործությունն այլ ձևով և այլն:

Ուսուցիչը պետք է ուշադիր լինի և ճիշտ մոտեցում դրսևորի հատկապես կերպարների բնորոշման հարցում: Դրական ու բացասական կերպարների առանձնացումը պետք է կատարվի համապատասխան հիմնավորումներով: Աշակերտները պետք է կարողանան հասկանալ յուրաքանչյուր հերոսի արարք, գնահատական տալ նրա վարմունքին: Շատ կարևոր է նաև աշակերտների ուշադրությունը սևեռել ստեղծագործության կառուցվածքային

մի շարք առանձնահատկությունների վրա: Ունկնդրումը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ունկնդրումը ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում նպաստում են սովորողների գործուն բառապաշարի հարստացմանը: Ձևավորվում է կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Նրանք պարզագույն պատկերացում են կազմում շրջակա աշխարհի մասին: Ծանոթանում են հասակակիցների կյանքին, նրանց խնդիրների:

Գրական ունկնդրման ժամերի համար <<Մայրենիի>> ուսումնական ծրագիրը ներկայացնում է հետևյալ պահանջները.

●Ունկնդրել և ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրել հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ:

●Կարծիքներ և տպավորություններ փոխանակել ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ:

●Հետևել գրական ստեղծագործության դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարաբերություններին և դրանք վերարտադրել նույնությամբ կամ ստեղծագործաբար:

●Պատմել ըստ հիշողության կամ նկարի:

●Նկարել ունկնդրած ստեղծագործության թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել կատարած աշխատանքները:

●Բեմականացնել ստեղծագործություններ և մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը:

●Կազմակերպել մանկական նկարների և ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսներ:

●Ստեղծել դասարանական գրադարան:

●Ընթերցել հումորային ստեղծագործություններ, պատմել զվարճալի դեպքեր սեփական կյանքից:

●Ընթերցել տարաբնույթ նյութեր, խմբերում քննարկել, սեփական կենսափորձից մտաբերել նման օրինակներ:

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու մշակույթի ձևավորումը: Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր ու դիպուկ արտահայտվել, այլև լսել խոսակցին, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն, ինչ ասվում է, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ:

Ունկնդրումը ենթադրում է սովորողի կողմից մի շարք հիմնական կարողությունների տիրապետում:

1. Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը:
2. Վեր հանել անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Ամբողջապես ըմբռնել ունկնդրվող բնագրի մանրամասները:

Ունկնդրման ունակություններին վերաբերող պահանջները փոխվում են դասարանից դասարան՝ ըստ լեզվական նյութի բարդացման և ընկալման պահանջների:

Ակտիվ ունկնդրման կարողությունների զարգացումը կհանգեցնի մի քանի խնդրի լուծման: Դրանք են.

ա) Ունկնդրումը վերածել խոսքային գործունեության անհրաժեշտ բաղադրամասի և երկկողմանի գործընթացի (ունկնդրման համար կարևոր են դիմախաղը, շարժումները և կեցվածքը):

բ) Ունկնդրման նպատակի բացահայտումը (ունկնդրման ակտիվության ապահովումը, այսինքն՝ ըմբռնումով ունկնդրումը):

գ) Հասկանալ ունկնդրված տեքստը (որոշել թեման և տեքստի հիմնական գաղափարը):

դ) Ունկնդրելիս ազատ լինել հարցեր առաջադրելու՝ լավ չհասկացածի կամ չընկալածի շուրջ:

ե) Ուշադրություն դարձնել խոսքի ընդհանուր բովանդակությանը և ոչ խոսքային միջոցներին (ձայնի հնչերանգը, տեմպը, բարձրությունը, դիմախաղը, շարժումները, կեցվածքը):

զ) Ստուգել բանավոր խոսքն ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները:

Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել նաև լսելիս ուշադիր և ակտիվ լինել, այսինքն՝ իրապես լսել զրուցակցին և պատասխան խոսքը կառուցել նրա ասածի հիմքով:

Առաջին դասարանում գրական նյութը սովորողը նախ ունկնդրում է, ապա ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրում է հեքիաթը, բանաստեղծությունը, հանելուկը, կազմում է իր կապակցված խոսքը: Երեխաները շատ են սիրում հատկապես նկարել իրենց ունկնդրած թեման:

Գրական ունկնդրման դասերին ստեղծագործություններն ունկնդրելիս կամ դիտելիս կարևոր է հետևել դեպքերի զարգացմանը, դրվագների հերթականությանը, խոսել հերոսների հարաբերությունների մասին, դրանք վերարտադրել նույնությամբ կամ ստեղծագործաբար: Օրինակ՝ Աթաբեկ Խնկոյանի <<Կռունկն ու աղվեսը>> առակը պատմելիս կանգ առնել յուրաքանչյուր դրվագի վրա, պատմել՝ պահպանելով դեպքերի հաջորդականությունը:

Նախայբբենական և տառուսուցման ընթացքում ուսուցիչը ցույց է տալիս ընթերցվող գիրքը, կարդում վերնագիրը, հեղինակի անունը: Աշակերտները կրկնում են: Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է աշակերտներին: Նրանք ուսումնասիրում են, թերթում, դիտում կազմը, նկարազարդումները: Դասի ավարտին ուսուցիչը հանձնարարում է մտապահել ստեղծագործության վերնագիրը, անձնական գրադարանում փնտրել, գտնել և դպրոց բերել նմանատիպ այլ գրքեր: Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության

նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը: Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն: Ունկնդրման ժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է:

Առաջին դասարանում ուսումնական գործունեությունը ուղեկցվում է խաղերով: Երբ խաղը մտնում է մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է աշխույժ մթնոլորտ: Այդ կերպ ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ խոչընդոտներն աննկատելիորեն անհետանում են: Անընդհատ կրկնվող և միակերպ խաղերն ու խաղային հնարները նույնպես կարող են ձանձրացնել երեխային, ուստի անհրաժեշտ է դրանք կիրառել ստեղծագործաբար: Խաղային պայմաններում աշակերտները հեշտությամբ են ներգրավվում ուսումնական գործունեության մեջ: Խաղն ուսուցման գործընթացում լուծում է և՛ կրթական, և՛ դաստիարակչական խնդիրներ:

Խաղային վարժությունների մեջ հարուստ նյութ են ծառայում ոչ միայն հանելուկները, հեքիաթները, այլ նաև շուտասելուկները: Այս խոսքային խաղ- վարժությունը երեխաները շատ են սիրում, որը կարելի է կազմակերպել՝ օրինակ մրցույթի ձևով՝ <<Ո՞վ շուտ կգուշակի>>, նախապես ունենալով համապատասխան նկարներ, նյութեր, որոնց միջոցով երեխան պետք է գուշակի, թե որ շուտասելուկի մասին է խոսքը:

Գրական ունկնդրման դասերին դաստիարակվում է հայրենասեր, ազնիվ, նպատակասլաց, աշխատասեր, բարի քաղաքացի:

Եզրակացություն

Գրական ունկնդրման ժամանակ պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտն անկաշկանդ և առանց սխալվելու վախի կարող է արտահայտել իր միտքը: Իսկ դրան հասնելու համար նախ պետք է նյութը հասանելի լինի երեխաներին, ոչ երկար, հետաքրքիր, բովանդակալից, առօրյա կյանքում իրեն ծանոթ: Ներկայացված լինի գունագեղ նկարների կամ ,հատկապես, մուլտֆիլմի և կարճամետրաժ ֆիլմերի տեսքով: Երեխաների համար հաճելի գործընթաց է նաև լսածն ու տեսածը բեմականացնելը:

Ստեղծագործության բովանդակության ընկալմանն ուղղված աշխատանքը պետք է անցկացնել միմիայն երեխաների սկզբնական ընկալումից հետո: Որպեսզի հեղինակի կողմից օգտագործված բառերը ամրակայվեն աշակերտների հիշողության մեջ և օգտագործվեն իրենց բանավոր խոսքում:

Այսպիսով գրական ունկնդրումն ուսուցման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ: Գրական ունկնդրման լիարժեք կազմակերպումը միջոց է՝ երեխաներին շրջապատի հետ արդյունավետ հաղորդակցվել սովորելու համար: Մայրենի լեզվի իմացությունն անհրաժեշտ է ոչ միայն ծրագրային թեմաները յուրացնելու և բարձր գնահատական ստանալու, այլև կարդացածը և ունկնդրածը լիարժեք վերարտադրելու, պատշաճ ձևով միմյանց հետ զրուցելու, օգտակար խորհուրդներ ստանալու և փոխանցելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կարինե Թորոսյան,Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար,«Զանգակ», Երևան,2013
2. Ջուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա,«Զանգակ»,Երևան, 2015
3. Տեր-Գրիգորյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
4. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
5. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
6. Կանեցյան Գ., Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990:
7. ԳյուլամիրյանՋ., «Մայրենի լեզու» դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան, 2004:
8. ԹորոսյանԿ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6:
9. Մանկավարժություն, Երևան, 2007:
10. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես, Երևան,2013: